ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/50

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհր Անանյանս, քննելով ՀՀ քաղաքացի Արմինե Համբարձումյանի կողմից 06.04.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/50 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ քաղաքացի Արմինե Համբարձումյանի կողմից ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

ՀՀ քաղաքացի Արմինե Համբարձումյանը Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 06.04.2018թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ ՀՀ պետական պահպանության ծառայության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ-ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-14/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ՀՀ քաղաքացի Արմինե Համբարձումյանը հայտնել է, որ «Սամսոն Գասպարյան» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ցանկություն է հայտնել մասնակցելու Ընթացակարգին:

ՀՀ քաղաքացի Արմինե Համբարձումյանը հայտնել է, որ www.gnumner.am պաշտոնական կայքում 28.03.2018թ. ժամը 11:28:00-ին հրապարակվել է, իսկ www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով նույն օրը ստացվել է «ՀՀ-ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-14/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր):

Հրավերում նշվել է, որ գնանշման հարցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը 11:00-ը:

Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրը ժամը 11:00-ին:

ՀՀ քաղաքացի Արմինե Համբարձումյանը հայտնել է, որ Ընկերությունը մինչև կպատրաստեր մասնակցության հայտի փաստաթղթերը, տեղեկանում է, որ հայտերի բացման նիստը կայացել է 03.04.2018թ. ժամը 11:00:00-ին, այնինչ այն պետք է տեղի ունենար 04.04.2018թ., քանի որ գնման ընթացակարգի վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է 28.03.2018թ. ժամը 11:28:00-ին, իսկ հայտերի բացումը պետք է տեղի ունենար էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրը, այն է՝ 04.04.2018թ. ժամը 11:28:00-ին:

Բողոքաբերի կողմից որպես բողոքի իրավական հիմքեր նշվել է հետևյալը.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտերով սահմանված ժամկետը որոշվում է օրացուցային տարով, ամսով, ամսաթվով կամ տարիներով, ամիսներով, շաբաթներով, օրերով կամ ժամերով հաշվարկվող որոշակի ժամանակահատվածի ավարտով:

Ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա և ամսաթվի կամ այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

2. Գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն.

Հայտերի՝ էլեկտրոնային եղանակով փոխանցման և ստացման միջոցների նկատմամբ պարտադիր կարգով կիրառելի են հետևյալ կանոնները.

1) շահագրգիռ մասնակիցներին մատչելի են հայտերի էլեկտրոնային ձևով ներկայացման համար անհրաժեշտ հատկանիշներին (այդ թվում՝ կոդավորմանը) վերաբերող տեղեկությունները.

2) հայտերի՝ էլեկտրոնային ձևով ստացման էլեկտրոնային սարքերը պետք է երաշխավորեն ստացված տվյալների ամբողջականությունն ու գաղտնիությունը՝ նվազագույնն ապահովելով հետևյալ պայմանները.

ա. հնարավոր է հստակ որոշել հայտերի ստացման ճշգրիտ ժամն ու ամսաթիվը,

բ. նախքան տվյալների փոխանցման համար սահմանված ժամկետները՝ փոխանցված տվյալները մատչելի չեն ոչ ոքի համար,

գ. այն դեպքում, երբ խախտվել է փոխանցված տվյալների մատչելիության արգելքը՝ հնարավոր է հստակ պարզել չարտոնված մուտքը,

դ. ստացված տվյալների բացման ժամկետները կարող են սահմանել կամ փոփոխել միայն լիազորված անձինք:

ե. գնումների ընթացակարգի տարբեր փուլերում՝ ստացված տվյալներին մուտք գործելը հնարավոր է առնվազն երկու լիազոր անձանց (համակարգերի) համաժամանակյա գործողությամբ և միայն սույն կետի համաձայն սահմանված ժամկետից հետո,

զ. սույն մասի պահանջներին համապատասխան ստացված և բացված տվյալները պետք է մատչելի մնան միայն դրանց ծանոթանալու լիազորություն ունեցող անձանց համար:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 80-րդ կետի համաձայն՝ գնանշման հարցման ձևով գնում կատարելու դեպքում կիրառվում են սույն կարգի 7-րդ բաժնով սահմանված պայմանները՝ հաշվի առնելով, որ հայտերը ներկայացնելու համար նախատեսվող ժամկետը պետք է պակաս չլինի յոթ և ավելի տասնհինգ օրացուցային օրվանից, որը հաշվարկվում է տեղեկագրում գնումների հայտարարության և հրավերի հրապարակման օրվանից, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ նախաորակավորված մասնակցիներին հրավերը տրամադրելու օրվանից:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ քաղաքացի Արմինե Համբարձումյանը հայտնել է, որ ՀՀ պետական պահպանության ծառայության կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով 28.03.2018թ. ժամը 11:28:00-ին հայտարարվել է «ՀՀ-ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-14/1» ծածկագրով գնման ընթացակարգ:

Գնանշման հարցման ձևով գնում կատարելու դեպքում հայտերը ներկայացնելու համար նախատեսվող ժամկետը պետք է պակաս չլինի յոթ և ավելի տասնհինգ օրացուցային օրվանից, որը հաշվարկվում է տեղեկագրում գնումների հայտարարության և հրավերի հրապարակման օրվանից:

Իրավական ակտերի մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված է, որ ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա և ամսաթվի կամ այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը:

«ՀՀ-ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-14/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման և բացման վերջնաժամկետ է սահմանվել Ընթացակարգի հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրը ժամը 11:00-ը, սակայն հայտեր բացումը տեղի է ունեցել 03.04.2018թ. ժամը 11:00:00-ին, այնինչ վերոնշյալ իրավական նորմերի համաձայն այն պետք է տեղի ունենար 04.04.2018թ. ժամը 11:28:00-ին:

ՀՀ քաղաքացի Արմինե Համբարձումյանը հայտնել է, որ վերոգրյալ իրավական հիմքերի և փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ Պատվիրատուի «ՀՀ-ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-14/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 8-րդ հոդվածի 4-րդ մասով և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 80-րդ կետով սահմանված պահանջները, քանի որ վերոնշյալ իրավական նորմերի խախտման պարագայում Ընկերության մասնակցության իրավունքը սահմանափակվել է, այն է՝ մրցակցության հավասար պայմաններ չեն ապահովել հնարավոր մասնակիցների համար, ինչի պատճառով Ընկերությունը չի կարողացել մասնակցել գնման ընթացակարգին, ինչը նաև նպաստել է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

ՀՀ քաղաքացի Արմինե Համբարձումյանը ներկայացված բողոքով խնդրել է.

պարտավորեցնել ՀՀ պետական պահպանության ծառայության կողմից հանդերձանքի ձեռբերման նպատակով հայտարարված «ՀՀ-ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-14/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին.

1. դադարեցնել 03.04.2018թ. ժամը 11:00-ին թիվ 1 արձանագրությամբ կայացված որոշումները:

2. չկայացած հայտարարել «ՀՀ-ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-14/1» ծածկագրով գնման ընթացակարգը:

ՀՀ քաղաքացի Արմինե Համբարձումյանը, պատշաճ ծանուցված լինելով 09.04.2018թ. ժամը 10:40-ին ԳԲԽ-ԱՄ-2018/50 բողոքով կայանալիք նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>ՀՀ պետական պահպանության ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական պահպանության ծառայությունը ՀՀ քաղաքացի Արմինե Համբարձումյանի կողմից 06.04.2018թ. ներկայացված բողոքի վերաբերյալ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

ՀՀ պետական պահպանության ծառայությունը, պատշաճ ծանուցված լինելով 09.04.2018թ. ժամը 10:40-ին ԳԲԽ-ԱՄ-2018/50 բողոքով կայանալիք նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. ԳԲԽ-ԱՄ-2018/50 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-ԱՄ-2018/50 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պետական պահպանության ծառայության կողմից ՀՀ պետական պահպանության ծառայության կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ-ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-14/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերի հայտարարությունը www.gnumner.am պաշտոնական կայքում հրապարակվել է 28.03.2018թ. ժամը 11:28-ին:

3. Ընթացակարգի հրավերի հայտարարության մեջ նշվել է, որ Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը 11:00-ը:

4. Ընթացակարգի հրավերի հայտարարության մեջ նշվել է նաև, որ հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրը ժամը 11:00-ին:

5. Պատվիրատուի կողմից Armeps էլեկտրոնային համակարգում հատերի բացման ամսաթիվ նշվել է 03.04.2018թ. ժամը 11:00-ն:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ քաղաքացի Արմինե Համբարձումյանի 06.04.2018թ. բողոքը, Ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնանշման հարցման ընթացակարգի կիրառման դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն առնվազն չորս աշխատանքային օր է, որը հաշվարկվում է տեղեկագրում գնումների հայտարարության և հրավերի հրապարակման, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ հրավերը նախաորակավորված մասնակիցներին տրամադրելու օրվանից:

Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 4-րդ կետի 4.1 ենթակետով սահմանվել է, որ ***հայտը ներկայացվում է մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը***:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 4-րդ կետի 4.2 ենթակետով սահմանվել է, որ ***Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել համակարգի միջոցով ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված «7»-րդ օրվա ժամը «11:00»-ն***: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում համակարգի կողմից:

ՀՀ պետական պահպանության ծառայության կողմից ՀՀ պետական պահպանության ծառայության կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ-ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-14/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հրավերի հայտարարությունը www.gnumner.am պաշտոնական կայքում հրապարակվել է 28.03.2018թ. ժամը 11:28-ին:

Ընթացակարգի հրավերի հայտարարության մեջ նշվել է, որ Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը 11:00-ն:

Ընթացակարգի հրավերի հայտարարության մեջ նշվել է նաև, որ հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրը ժամը 11:00-ին:

Պատվիրատուի կողմից Armeps էլեկտրոնային համակարգում հատերի բացման ամսաթիվ նշվել է 03.04.2018թ. ժամը 11:00-ն:

ՀՀ քաղաքացի Արմինե Համբարձումյանը բողոքով հայտնել է, որ «ՀՀ-ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-14/1» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ հայտարարությունը www.gnumner.am կայքում հրապարակվել է 28.03.2018թ. ժամը 11:28-ին և հրավերով հայտերի ներկայացման և բացման վերջնաժամկետ է սահմանվել Ընթացակարգի հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրը ժամը 11:00-ն, սակայն

հայտերի բացումը տեղի է ունեցել 03.04.2018թ.-ին ժամը 11:00-ին, այնինչ պետք է տեղի ունենար 04.04.2018թ.-ին ժամը 11:28-ին, քանի որ իրավական ակտերի մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված է, որ ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա և ամսաթվի կամ այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, գտնում եմ, որ ՀՀ քաղաքացի Արմինե Համբարձումյանի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***գնանշման հարցման ընթացակարգի կիրառման դեպքում <u>հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն առնվազն չորս աշխատանքային օր է</u>, որը <u>հաշվարկվում է տեղեկագրում գնումների հայտարարության և հրավերի հրապարակման</u>***, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ հրավերը նախաորակավորված մասնակիցներին տրամադրելու ***<u>օրվանից</u>***:

Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***<u>հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում</u>***: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից պարզ է դառնում, որ գնանշման հարցման ընթացակարգի կիրառման դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն հաշվարկվում է տեղեկագրում գնումների հայտարարության և հրավերի հրապարակման օրվանից, իսկ հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին՝ հայտերի բացման նիստում:

Միաժամանակ արձանագրում եմ, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 85-րդ հոդվածով հստակ սահմանվում է, որ ***եթե օրենքով*** կամ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող օրենսդրական ակտով ***սահմանված է ժամկետների հաշվարկման այլ կարգ, ապա*** տվյալ ակտով կարգավորվող իրավահարաբերությունների ժամանակ ***կիրառվում է այդ օրենքով*** կամ իրավահարաբերությունը կարգավորող օրենսդրական ակտով ***սահմանված ժամկետների հաշվարկման կարգը:***

Վերոգրյալով պայմանավորված, գտնում եմ, որ Պատվիրատուն www.gnumner.am պաշտոնական կայքում «ՀՀ-ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-14/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը հրապարակելով 28.03.2018թ. ժամը 11:28-ին և հայտերը բացման օրը հաշվարկելով այդ օրվանից և հայտերը բացելով հրավերում նշված ժամին՝ ժամը 11:00-ին, գործել է Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասով և Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների պահպանմամբ:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն դիտարկմանը, որ Պատվիրատուի կողմից խախտվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 80-րդ կետով սահմանված պահանջը, քանի որ Գնանշման հարցման ձևով գնում կատարելու դեպքում հայտերը ներկայացնելու համար նախատեսվող ժամկետը պետք է պակաս չլինի յոթ օրացուցային օրվանից, ապա սույն մասով արձանագրում եմ, որ Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ ***գնանշման հարցման ընթացակարգի կիրառման դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն <u>առնվազն չորս աշխատանքային օր</u> է***, միաժամանակ արձանագրում եմ, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ եթե իրավական ակտն ընդունվել է ի կատարումն կամ համաձայն նույն կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի, ապա ***այդ ակտը մեկնաբանվում է՝ առաջին հերթին հիմք ընդունելով ավելի բարձր իրավական ուժ ունեցող ակտի դրույթներն ու սկզբունքները:***

Այսպիսով Պատվիրատուն «ՀՀ-ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-14/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը <u>www.gnumner.am</u> պաշտոնական կայքում հրապարակելով 28.03.2018թ. ժամը 11:28-ին և հայտերը բացելով 03.04.2018թ. ժամը 11:00-ին գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

ՀՀ քաղաքացի Արմինե Համբարձումյանի կողմից 06.04.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ